

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 24 » օգոստոս 2018 թ No 2183 - Ա

«ԱՆԳԻՈՎԻՏ N60 (ՍԵՐԻԱ 310317, ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ՝ 04.2020),
(ՍԵՐԻԱ 611016, ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ՝ 11.2019)», «ԳԱԼԱԶՈԼԻՆ 0,05%
10ՍԼ (ՍԵՐԻԱ 01ՎԼ0216, ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ՝ 02.2020)» ԴԵՂԵՐԻ
ՆՇՎԱԾ ՍԵՐԻԱՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՇՐՋԱՆԱԴՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇՐՋԱՆԱԴՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼՈՒ
(ՀԵՏԿԱՆԶԸ) ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ. կետը, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի «20» ենթակետը, առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության այլ արտադրանքի և կենսակտիվ սննդային հավելումների շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը, հետկանչի մասին ահազանգի ծանուցման և հետ կանչի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ձևերը հաստատելու մասին» թիվ 303-Ա հրամանը, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 14.08.2018թ. թիվ 01/1413-18 և 17.08.2018թ. թիվ 01/1488-18 գրությունները, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 30.07.2018թ. թիվ 0314112618 և ~~06.08.2018թ. թիվ 0114115418~~ փորձագիտական եզրակացությունները,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Ընդհանուր և արտաքին կապերի բաժին
№ 8058 27 AUG 2018 ժամ 13:45
Կից Դեղի կարգավիճակ
Նշումներ

1. Դեղերի մեծածախ իրացմամբ զբաղվող, դեղատնային գործունեություն իրականացող, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին՝ անհապաղ դադարեցնել «Անգիոլիտ N60 (սերիա 310317, պիտանիության ժամկետ՝ 04.2020), (սերիա

Սահմ. 27.08.18 Վ.Լ.Չ.Չ.

611016, պիտանիության ժամկետ՝ 11.2019)», «Գալազոլին 0,05% 10մլ (սերիա 01VL0216, պիտանիության ժամկետ՝ 02.2020)» դեղերի նշված սերիաների շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

2. «Դավիթ Սահակյան Ռոբերտի» անհատ ձեռնարկատիրոջը՝ ապահովել սույն հրամանի 1-ին կետի դեղերի նշված սերիաների շրջանառության դադարեցումը:

3. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ.Թովիցյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) գործընթացի համակարգումը և արդյունքների մասին պարբերաբար տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարությանը:


4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

5. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին սույն հրամանը 3-օրյա ժամկետում պատշաճ ձևով պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ ուղարկել վարչական վարույթի մասնակիցներին:

6. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

24.08.2018

X 

VERIFIED OCSP 24.08.2018 16:04:09 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ